

թիւն, այս է միայն աստուածային բնութիւն, եւ զնոյն ասն շարշարեալ, ոչ թէ առաջինքն հայրապետաց եւ վարդապետաց մերոց սրբոց, այլ վերջին պղտորեալ ժամանակիս երեւեալ վարդապետքս:»

Անդ էջ 396. «Երկրորդ խուլ յովաննէս վարդապետն, եւ պատրիարզն Կ. Պօլսոյ, որ ի գիրս, զոր արար լի ուղղափառ վարդապետութեամբ, համառօտ եւ պարզ բանիւ ստուգեաց վկայութեամբ հարց եւ գրոց սրբոց, թէ հոգին սուրբ ի հօրէ եւ յորդուոյ բղխէ:»

Անդ. Tomus II, Roma 1661, էջ 242.

«...Եւ դարձեալ յաղագս Սարգսի գրէ խուլ վարդապետն յովհաննէս այսպէս. Սարգիս վարդապետն, որ զկաթուղիկէին մեկնութիւն էած, ասաց ի գիրսն իւր. Քրիստոս կացոյց նոցա գլուխ եւ առաջնորդ եւ հիմն հաւատոյ, զերջանիկ առաքեալն պետրոս: Եւ յետ սակաւուց ասէ. Պետրոսի ձեռքն հիմունս արկին եկեղեցւոյ ի մեծն հռովմ:»

Անդ էջ 244. «...Յոհաննէս արհիեպիսկոպոսն Կ. Պօլսի, խուլ վարդապետ կոչեցեալ, զորիչ այլ գիրս շարագրեաց. որով ի գլխաւորութենէ սուրբ առաքելոյն պետրոսի քաջապէս հաւաստի առնէ զառաջնորդութիւն, զոր ունի եկեղեցին հռովմայ ի վերայ ամենայն աթոռոց եւ քրիստոնէից:»

«Նոյն յովհաննէս ի նմին գրումն ասէ եթէ այլ ոմն վարդան անուն ուղղափառ վարդապետն գրէ ի պատմագրի իւրում այսպէս «ի ՈԼԵ Թուականիս հայոց՝ թագաւորեաց յունաց փերսիկն, որ եւ սահակ, եւ յարոյց հալածանս, եւ շարշարէր զհայոց ազգս, զայսպիսի աղէտս գրեաց տէր գրիգոր հայոց կաթողիկոսն, եւ առաքեաց զեպիսկոպոս մի գրիգոր անուն ի պապն հռովմայ վասն վտանկին, զոր ի յունաց կրէին հայք. եւ զի խնդրեսցէ նմա զաղօթս եւ զօրհնութիւնս, որպէս առաջինքն.